ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի ոչ մի բառում *չի* գրվում *ը*.**

1) գործ-նկեր, առ-նթեր, ակ-նբախ, ին-սուն
2) ան-ստույգ, առ-նչություն, ակ-նթարթ, կոր-նթարդ
3) հոտ-նկայս, ակ-նբախ, մարտ-նչել, օր-ստորե
4) ան-նկճելի, երկ-նչել, կր-նկակոխ, շր-խկոց

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *և*.**

1) բա-բասել, հա-պատրաստից, ա-բերրիություն, ա-փույթ
2) ա-պայման, ա-պաճույճ, շա-բուտ, ա-պետք
3) Մա-վել, զա-բյուղ, ա-բարիշտ, ա-պարփակ
4) ա-բարյացակամ, բա-բեր, ա-բասիր, ա-պարկեշտ

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին.**

1) բարձր(աշխարհիկ), հիսուն(երեք), առ(այժմ), ծունկ(չոքել)
2) առ(ձեռն), բերնե(բերան), քաջ(առողջություն), թեթև(քաշային)
3) բուժ(օգնություն), երկ(կենցաղ), ի(վերուստ), առ(հավետ)
4) վայր(ի)վերո, նոր(ջուղայեցի), առ(այն), համ(երկրացի)

4 **Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.**

1) ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ, ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ
2) ՆՈՐ ԱՐԵՇ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ
3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ, ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱ
4) ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ, ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) դեռափթիթ, մատղաշ, մանկամիտ, պատանի
2) անիմաստ, անմիտ, անկաշկանդ, անհեթեթ
3) ակնդետ, սևեռուն, անքթիթ, ուշադիր
4) վտանգազերծ, ապահով, անվնաս, անաղարտ

6 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից.**

1) ծածուկ–բացեիբաց, խռով–հաշտ, խոնարհություն–ամբարտավանություն
2) անխոհեմ–ողջախոհ, տնտեսել–շռայլել, արի–վեհերոտ
3) հաղորդիչ–մեկուսիչ, ողորկ–անհարթ, եկամտաբեր–կորստաբեր
4) նկուն–աներեր, թերի–ավարտուն, սուղ–սակավ

7	**Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Հորեղբայրս հայտնի որսորդ է, սակայն վերջերս խիստ զբաղված լինելու պատճառով արդեն ստեպ-ստեպ է գնում որսի:
2) Կատակերգության երկրորդ տեսիլը ամենահաջողվածն էր և գերեց բոլորին:
3) Ուսուցչուհին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած ներհուն աշակերտներին:
4) Ասպնջական ընտանիքում միշտ էլ հաճելի է հյուրընկալվելը:

8	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

1) խանդոտ, փորձագետ, հպանցիկ, տհաճ
2) պարագլուխ, քսուք, անդրավարտիք, սիգաճեմ
3) մայիսյան, վարք, փորձանք, մարդկային
4) թերակշռել, խելագար, վայելուչ, մեղմասահ

9	**Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) բևեռախույզ, աղախին, հողագործ, հովեկ
2) կրակակետ, աստղ, բաղաձայն, ժամացույց
3) թվական, ձուկ, մահճակալ, վիրակապ
4) վաչկատուն, սառցահատ, վկայագիր, հրաձիգ

10	**Ո՞ր նախադասության մեջ քանակական թվական կա:**

1) Այդ ժողովից մի քանի օր հետո Նիկողոս աղան զարհուրելի ծաղրուծանակի ենթարկվեց:
2) Ով տանը ժամացույց ուներ, անմիջապես նայում էր և սլաքներն ուղղում յոթից քառորդ անց:
3) Երեկոյան, երբ մենք բաց էինք թողնում մեր թռուցիկները, թվում էր, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:
4) Անձրևի տասներորդ օրը գետի ջուրն այնքան առատ էր, որ կարող էր սայլերը քշելով տանել:

11	**Ո՞ր նախադասության մեջ դերանուն *չկա:***

1) Ակսել Բակունցն առասպելի հերոսի պես ընդամենը մի քանի տարում սովորական գյուղթղթակցից դարձավ մեծ գրող:
2) Գավառական փոքրիկ քաղաքում ավտոմեքենա տարին մեկ է երևում, իսկ փողոցներում էլ մարդ չկա:
3) Մայրը, վերջալույսի արևի շողերից աչքերը ձեռքով ծածկելով, նայում էր կածանի կեռումեռ պտույտին և սպասում, թե երբ են երևալու հարսն ու աղջիկը:
4) Առաջին երկու շաբաթը շատ արագ անցավ, նորեկները սովորեցին գյուղին, և ամեն ինչ մտավ հունի մեջ:

12	**Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ գործածություն *չկա:***

1) Բանախոսի դեմ ելույթ էին ունեցել երկու տեղացի նկարիչներ, ոմն արվեստագետ Ֆրանսիայից և այլոք:
2) Հասկանու՞մ եք, ոչ մեկ չփորձեց օգնել ինձ, երբ մենակ էի ու անօգ:
3) Չգիտեմ՝ ո՛րդ կարող է գլուխ հանել այդ խճճված գործից:
4) Ոչնչից և ոչ ոքից այնքան չէր զգուշանում, որքան իրեն անձնական թիկնապահից:

13 **Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ** ***չկա:***

1) Զարմացած նայեցի նրա դեմքին. այդ դեմքն արտահայտում էր միաժամանակ և՛ զայրույթ, և՛ պաղատանք:
2) Ուղեկցուհիս շատ էր տխրել և այլևս ոչինչ չէր խոսում:
3) Եվ ես, որ երբեք չեմ իմացել սենտիմենտալություն, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աչքի առջև փշրել այն:
4) Նա փախավ մի քսան քայլ հեռու, կուչ եկավ մի ծառի տակ և գիրքը թևի տակ առավ:

14 **Տրված հատվածներից քանիսո՞ւմ անդեմ նախադասություն կա:**

- Այս ցուրտ երկրի անհայտում անհուն
  Ընկնել, կորչել և ննջել հավետ:
- Նորից անձրև՜, մշո՜ւշ, ա՜մպ,
  Թախի՜ծ անհուն, տխրա՜նք հեզ:
- Իմ խաղաղ երեկոն է հիմա
  Մեղմալույս, և՛ տխուր, և՛ անուշ:
- Արդյոք կժպտա՞ս, լուսեղե՛ն երազ:

1) մեկում
2) երկուսում
3) երեքում
4) չորսում

15 **Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:**

1) Քո ոտքերի վրա դու կբերես **հետքեր,**
   Ո՜վ գիտե, ինչպիսի՜ արահետների:
2) Եվ կոպերիդ ներքո շռայլությամբ վերջին
   Արևը իր **բույրը** կվառե:
3) Գնում ես դեպի **հեռուները** վսեմ:
4) Քո ռունգերից, քո սրտից, քո հետքերից հառնած՝
   Մեզ կողջունեն **օրերդ:**

16 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Եթե տեսներ այն, ինչ ես էի տեսել, այդպես չէր վարվի:
2) Ազատ ժամանակ նրա հիմնական զբաղմունքը ընթերցելն է:
3) Մեքենան շուռ էր եկել, բայց, փա՜ռք Աստծո, վիրավորներ չկային:
4) Բայց մեղքը, ավելի ճիշտ, ոճիրը արդեն կատարվել էր:

17 **Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված որոշիչ *չկա:***

1) Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,
   Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը:
2) Ու մշուշոտ մեր աչքերը հավիտյան
   Որոնեցին պատահական աչքերում
   Հարդագողի ուղիները ոսկեման…
3) Հոգնել եմ ամեն հովից թեքվելուց,
   Հոգուս մեջ հոգուս ցավը հեգնելուց,
   Ինքս իմ ստվերից ահաբեկվելուց:
4) Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,
   Եվ այնքա՜ն ներում- ո՞ր երկրի սրտում:

18 **Ընդգծվածներից ո՞րը բայական անդամի լրացում *չէ:***

1) Բայց հուշերիս մեջ նայում ինձ **դարձյալ**,
   Ժպտում են դարձյալ աչքերը քո ջինջ:
2) Ու ես չասացի **ոչ ոքի** ոչինչ,
   Մինչև այս երգը լույս աշխարհ եկավ:
3) Ճակատագիրն ինձ շպրտեց հարավ,
   Իսկ **քո** երազը քեզ հյուսիս տարավ:
4) Ուղեկցում է ահը մահվան
   Մեզ ծննդյան պահից:

19 **Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված *չէ* (նախադասությունները կետադրված չեն):**

1) Գնացքի շոգեկառքը զարդարել էին **փողփողացող ալ դրոշներով:**
2) **Անհայտ հեռուներից մինչև նախիրյան այդ քաղաքը ձգված** երկաթե գծերի վրայով գնացքը մոտեցել է կայարանին:
3) **Իր այդ մարդասիրական քայլն անելով** նա գրավեց շատ մարդկանց հոգիները:
4) Դա մի մեծ հյուրասրահ էր **կահավորված թանկարժեք իրերով:**

20 **Ո՞ր նախադասության մեջ միջակետ *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Այս նամակի հետ ուղարկում եմ նաև դրամ երբ ծախսես հիշիր որ այն հայրդ է ուղարկել:
2) Մուշեղը մտածում էր կարգի բերել իր ընտանեկան գործերը նա նույնպես մի քանի օրից պետք է թողներ Ողական ամրոցը:
3) Սամվելի հայրն ուներ մի նպատակ որդուն դարձնել հայոց այրուձիի հրամանատար:
4) Մղձավանջը համառորեն հետապնդում էր նրան այդ մարդը ամեն գիշեր երազում տեսնում էր կորցրած բնօրրանը:

21 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. 26 տարեկան էր, որ ձեռնարկեց անհավատալի դժվար մի աշխատանք: Մի քանդակագործ ավելի քան հինգ մետր բարձրությամբ մարմարե բեկորից սկսել էր արձան քանդակել, բայց փչացրել էր մարմարն ու այդպես էլ թողել: Լավագույն վարպետներն անգամ հրաժարվում էին այդ խեղված մարմարից քանդակ ստեղծելուց:
2. Քանդակագործն իր հերոսին պատկերել է մարտի պատրաստվելու պահին: Լայն բացած աչքերով նայում է նա հսկային՝ ձախ ձեռքում սեղմած պարսատիկը: Դավիթը լի է վճռականությամբ, հանդարտ է ու ահեղ:
3. Միքելանջելոյի մանկությունն անցել է Ֆլորենցիայում: Արվեստագետի նրա տաղանդը վաղ դրսևորվեց, և նա, հակառակ հոր կամքի, որոշեց նվիրվել արվեստին: Տասներեք տարեկան էր, երբ դարձավ նկարչի աշակերտ, իսկ շուտով հոյակապ քանդակների հեղինակ էր արդեն:
4. Միքելանջելոն հանձն առավ այդ գործը: Երեք տարի անց քանդակը պատրաստ էր: Հինավուրց առասպելը պատմում է, որ մենամարտում Դավիթը հաղթում է իր ժողովրդի թշնամուն՝ հսկա Գողիաթին:

1) 3, 1, 4, 2
2) 2, 3, 4, 1
3) 2, 3, 1, 4
4) 3, 4, 1, 2

22 **Ո՞ւմ մասին է.**

«Նա սիրեց մենակեցության վարքը, ինչպես ասել է մեկը, թե ալեկոծված նավն շտապում է դեպի նավահանգիստը, իսկ ժուժկալող մարդը անապատ է փնտրում: …Գնում է Գողթն գավառը և ապրում մենակյացի կյանքով»:

1) Ասպրամի («Գևորգ Մարզպետունի», Մուրացան)
2) Սամվելի («Սամվել», Ռաֆֆի)
3) Մեսրոպ Մաշտոցի («Հայոց պատմություն», Մովսես Խորենացի)
4) Վանահոր («Հին աստվածներ», Լևոն Շանթ)

23 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Թուխ ամպն այլ բամպակ արէ՛ք, ի ծաւէն դերձան քաշեցէ՛ք
2. Արեւն իւր երեսք արէ՛ք, զլուսընկան աստառ ձեւեցէ՛ք
3. Քանի՞ ու քանի՞ ասեմ. «Զիմ եարին կապան կարեցէ՛ք
4. Աստղերն այլ կոճակ արէ՛ք, զիս ի ներս ողկիկ շարեցէ՛ք»

1) 1, 3, 4, 2
2) 3, 2, 4, 1
3) 3, 1, 2, 4
4) 3, 2, 1, 4

24 **Ո՞ր պնդումը ճիշտ *չէ* Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանի» վերաբերյալ:**

1) Աբովյանը խոսում է աշխարհաբարով գրելու անհրաժեշտության մասին:
2) Աբովյանը համաձայն է այն կարծիքին, որ մեր ազգը ուսումնասեր չէ, և կարդալը նրա համար արժեք չունի:
3) Աբովյանը բարձր է գնահատում գրաբարը՝ իբրև կատարյալ և անթերի լեզու:
4) Աբովյանը խոսում է ժողովրդին հոգեհարազատ թեմաներով գրելու անհրաժեշտության մասին:

25 **Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր գլխում է Սամվելն իր հորն սպանում:**

1) «Ուրացողը յուր տան շեմքի վրա»
2) «Երկու սուրհանդակ»
3) «Արաքսի որոգայթները»
4) «Մեկը-արևմուտքում, մյուսը-արևելքում»

26 **Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի ո՞ր հերոսի խոսքերն են.**

«Ամփոփի՛ր ինձ միջնաբերդի առաջ՝ ժայռերի բարձրության վրա, որտեղից կարողանամ հսկել Աշոտ Բռնավորի շիրիմին, որպեսզի նա յուր շուրջն ամփոփված սրբերին չդավաճանե»:

1) Աշոտ Երկաթի
2) Ցլիկ Ամրամի
3) Գևորգ Մարզպետունու
4) Սահակ Սևադայի

27 **Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի ո՞ր կերպարի մասին է հետևյալ հեղինակային խոսքը.**

«Նա կանգնած էր երկու մարդու միջև՝ մեկը՝ միլիոնների ժառանգը, մյուսը՝ այն աղքատ երիտասարդը, որ իր ընտանիքը պահում էր մասնավոր դասերով»:

1) Միքայելի
2) Մարութխանյանի
3) Սմբատի
4) Արշակի

28 **Դանիել Վարուժանի ո՞ր բանաստեղծություններից են տրված հատվածները:**

ա. Ու պայքա՜ր, պայքա՜ր, պայքա՜ր երգեցի.
-Ձեզի ընծա՜, հայ մարտիկներ-
Գրիչս եղավ անթրոց սրրտերու հնոցի…
- Ձեզի ընծա՜, քաջ մարտիկներ…

բ. Գյուղակներեն հորիզոնները մինչև
Կը տարածվի մեր մայրությունը հողի.
Գարունն եկա՜վ, չի բավեր ձյունը թեթև
Ա՛լ ծածկելու մեր մերկությունը հղի:

գ. Ցորեն, կակաչ, կարոտով,
-Կաքավը կու լա,
Կապեցի մեկ նարոտով,
-Ձեռքերն են հինա:

դ. Հովե՜ր կ'անցնին.
Ա՛յնքան կ'հորդի, կը կատղի դաշտը հուռթի,
Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:
Գոգին մեջեն ալեծածան հովիտին
Ծովե՜ր կանցնին:

1) «Հունձք կը ժողվեմ…»
2) «Ձոն»
3) «Ցորյանի ծովեր»
4) «Արտերուն հրավերը»

1) ա- 2, բ- 3, գ- 4, դ-1
2) ա- 1, բ- 3, գ- 4, դ-1
3) ա- 2, բ- 4, գ- 1, դ-3
4) ա- 3, բ- 2, գ- 1, դ-4

29 **Հատվածներից ո՞րը Վահան Տերյանի բանաստեղծություններից *չէ:***

1) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց.
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին…
2) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
Օղակելով լույս աստղերը մեկմեկու:
3) Լուսամփոփի պես աղջիկ, աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի պես երազի…
4) Բարբարոսներ շատ կրգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կրմնա հավետ:

30 **Տրված հատվածներից ո՞րն է Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:**

1) Ե՛վ անապատում, և՛ հավերժական
Անուրջում հոգիս կլսե, կզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կգգվե տատասկին դժնյա:
2) Գնա՛, քարավա՛ն, ինձ հետդ քա՛ղշ տուր
Օտար, ամայի ճամփեքի վրա.
Ուրտեղ կհոգնիս՝ գլուխս վար դիր
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
3) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
Ղողանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյութում իմ հոգին
Թափառումների տենչով անմեկին…
4) Գիշերն ահարկու՝ և՛ սև, և՛ հսկա, մի չղջիկի պես թևերը փռեց,
Անծիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:

31 **Եղիշե Չարենցի «Հեռացումի խոսքեր» բանաստեղծության մեջ ո՞ր բառն է բաց թողած:**

– Ի՜նչ էլ լինի, քո՛ւյր իմ, քո՛ւյր, հեռանալիս ……
Խե՜ղճ կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան…

1) չտխրես
2) կհիշես
3) չանիծես
4) չտանես

32 **Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել բաց թողած տեղում:**

Անտառում խորին խորհուրդներ կային,
…… կային անտառում,
Օրոր էր ասում աշունն անտառին,
Սակայն անտառի քունը չէր տանում:

1) Կապույտ մշուշներ
2) Մարդկային հետքեր
3) Խոնավ բուրմունքներ
4) Եվ արձագանքներ

33 **Բառերից քանիսո՞ւմ *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա.**

ըղձալի, ընդհանուր, ընչաքաղց, ըմպել, ընդունայն, ընկեր, ընտրանի, ընդեղեն, ընդսմին:

34 **Տրվածներից քանի՞սը համանուն *չունեն:***

քամի, գետին, անցավ, կանգնեց, վանեցի, հոսեր, վազեր, խնդրեր, աներ, գոց:

35 **Տրվածներից քանի՞սն են սահմանական եղանակի ժամանակաձևեր.**

թռչեիր, չխոնարհվես, լացել է, հանդիմանելու է, չեմ պաշտպանելու, չես հրամայի, ելնենք, կառուցեցի, խաղայի, հանգրվանեցիր, զարմացրիր, կայիր:

36 **Տրվածներից քանի՞սն են պարզ դիմավոր ձևեր.**

չէր ապաքինվել, պետք է մտածեիր, եփեցինք-թափեցինք, կարժանանա, մի՛ վարանիր, կանգ էր առել, դուրս եկավ, չպիտի լսես, թույլ մի՛ տուր, սիրտ արեց:

37 **Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:**

Ահը սրտում՝ իջել է մայրս լեռներից՝ իր մեջքին զգալով փոքրիկ արարածի գոյությունը, իջել է ամպերի միջից: Պետք է որ մայրս թաքուն բերկրանք զգար իր սրտի տակ բարի արևից ջերմացած այն հովիտն իջնելիս:

38 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Ու ես, աստիճանաբար հաշտվելով դժխեմ ճակատագրին, մի որոշ ժամանակ էլ անցկացրի, ու նախօրոք վճռված ժամկետը չլրացած, գնացի հարևան փողոցի վեցերորդ շենքը՝ զինվոր գրվելու:
- Ինքը դուրս եկավ, մոտեցավ գետի հուռթի կանաչով ծածկված ափին ու նստելով այնտեղ ընկած մի փտած գերանի՝ սկսեց անթարթ հայացքով դիտել շառաչուն գետի հաստատուն վազքը:
- Սմբատը, ծովեզրին արձանացած, լռելյայն ըմբոշխնում էր չքնաղ տեսարանը, ու հրճվում:
- Բայց հիմա ամեն ինչ պարզ է և չի կարելի խոչընդոտ դառնալ մի ուժի առջև, որը երբեք չես կարող կասեցնել:

39 **Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.**

1. լրագիր, 2. մրցապայքար, 3. խաղավարտ, 4. կաթված, 5. փափկել, 6. հրաման, 7. կահասենյակ, 8. փաղաքշանք, 9. խճապատ:

40 **Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.**

1. շրթունք, 2. անկյուն, 3. ցանցկեն, 4. դիմում, 5. անջատ, 6. աշխատանք, 7. վրիպակ, 8. անձավ, 9. գրգիռ:

41 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Մի քանի ամիս անցած՝ հայրս վերադարձավ Ղուբայից, ուր լինում էր տարվա մեծ մասը. նա, իհարկե, բարկացավ ինձ վրա, երբ մայրս հաղորդեց նրան իմ հանդուգն արարքի մասին:

1. **մի քանի** - անորոշ դերանուն, **անցած** – հարակատար դերբայ, ածանցավոր
2. **վերադարձավ** – սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, **լինում էր** - անկանոն բայ, ներգործական սեռ
3. **իհարկե** - վերաբերական, **երբ** - հարաբերական դերանուն
4. **նրան** - անձնական դերանուն, տրական հոլով, **բարկացավ** - **ա** խոնարհման պարզ բայ, չեզոք սեռ
5. **հաղորդեց** – **ե** խոնարհման պարզ բայ, ներգործական սեռ, **մասին** –կապ, հետադրություն

42 **Նշել պարզ նախադասությունների համարները:**

1. Թագավորն ընկավ մտածմունքների մեջ և մորուսով ծնոտը հենեց աջին:
2. Ամենքը հետաքրքրված առաջ էին գալիս՝ տեսնելու սպանվածի կնոջը՝ անծանոթ իշխանուհուն:
3. Արշակը շփոթված մտածում էր այդ լուրը ամբողջ երկրում տարածելու և ամեն տեղ հասցնելու մասին:
4. Չանցած մի քանի վայրկյան՝ ներս մտավ իշխանը՝ ըստ սովորության՝ ձգված կանգնելով բոլորի առջև:
5. Հայ ժողովուրդը՝ անզեն, սակավաթիվ, անպաշտպան, սարսափի ու անորոշության մեջ էր:
6. Բայց այդ առյուծը իր ծերուկ ծնողի առջև գառնուկի պես հեզ է, իր գյուղի աղջիկների դիմաց շիկնում է ամոթխած:

43 **Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.**

1. հանգավորում, 2. հակադրություն, 3. մակդիր, 4. անձնավորում, 5. փոխաբերություն:

Մեր տան աղբյուրն է մայրս,
Մեր ծարավ քույրն է մայրս,
Մեր տան անքունն է մայրս,
Մեր անուշ քունն է մայրս,
Մեր տան ճրագն է մայրս,
Մեր արեգակն է մայրս...

44 **Նշել այն համարները, որոնցում նշված են հատվածներ Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքից:**

1. Առաջին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում: Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մասին...
2. Ինչո՞ւ եկավ այգին, արդյոք Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին՝ մտածելով, որ ներսն էլ ամայի է, ինչպես այգում:
3. Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին:
4. Հենց այդ օրից էլ գլխին կարմիր շոր կապած աղջիկը , որ մինչ այդ իմ քառասուն աշակերտներից մեկն էր, բոլորից ջոկվեց և իմ աչքում դարձավ այն կետը, որի շուրջ պտտվում էր իմ ներքին աշխարհը:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Հայերենը ունի տասը խոսքի մաս, որոնցից նյութական իմաստ են արտահայտում միայն գոյականը, ածականը, թվականը, դերանունը և բայը:
2. Կապերը և շաղկապները արտահայտում են հարաբերություններ, և դրանց մեծ մասը նախադասության անդամ չի դառնում:
3. Եղանակավորող բառերը (վերաբերականներ) արտահայտում են դատողական վերաբերմունք, իսկ ձայնարկությունները՝ զգացական:
4. Հայերենում դեմքի կարգը բնորոշ է բայերին և դերանուններին, իսկ եղանակի կարգը՝ եղանակավորող բառերին և բայերին:
5. Կան բառեր, որոնց խոսքիմասային պատկանելությունը նախադասությունից դուրս որոշելն անհնար է:
6. Գոյականը, ածականը, թվականը կարող են կիրառվել փոխանվանաբար:

Բ մակարդակ

46 **Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը սխալ նշված.**

1) ՄԻԲ-222
2) Լ-30
3) ՐՈ-5006
4) Է-7

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա.**

1) խճանկար, ճգնակյաց, նրբիրան, կնքահայր
2) երկընտրանք, պատարագ, խնկաման, դշխուհի
3) սկիզբ, անձրևոտ, փղոսկր, չնաշխարհիկ
4) ընդառաջ, շնորհ, զննել, սրբապատկեր

48 **Տրված բառերից քանիսո՞ւմ մեկից ավելի հնչյունափոխություն կա.**

բրդատվություն, մատենագրություն, բնութագրական, ծննդյան, դստրիկ, չվացուցակ, միջնորմ, պատվախնդրորեն, քննաշրջան, հանդգնել:

1) յոթում
2) ութում
3) բոլորում
4) հինգում

49 **Տրված բառերից քանի՞ հոմանշային զույգ է հնարավոր կազմել.**

վեղար, ապահով, կնգուղ, սապատ, սմբուկ, դեղձան, որդի, քաղցրախոս, բաղրիջան, խարտյաշ, ռազմիկ, ուստր:

1) հինգ
2) չորս
3) երեք
4) երկու

50 **Ո՞ր շարքի ոչ բոլոր բառակապակցություններն ունեն դարձվածային իմաստ:**

1) հետին պլան մղվել, կաշվից դուրս գալ, խոսքի թելը կտրել
2) աչք չբացել, սպիտակ դրոշ պարզել, մեջքը ծռել
3) աչքը թեքել, պատերը ներկել, արևը խավարել
4) ձեռնոց նետել, խաղից դուրս գալ, աչք փակել

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) թախիծ, վերարկու, արմատ, թիրախ
2) պնակ, կախարդ, խնդիր, տրտում
3) դատարկ, փոթորիկ, կարոտ, շքեղ
4) ժառանգ, ճանապարհ, փառք, վայրագ

52 **Ո՞ր շարքում հապավում *չկա:***

1) տեղանուն, լրտես, ինքնուս, չարքաշ
2) երկբևեռ, պատկից, պետկրկես, ջրշուն
3) փողոսկր, մարզպետ, կուրսղեկ, խոտհունձ
4) գետանց, վերհուշ, քաղբյուրո, շուրջկալ

53 **Ո՞ր շարքում *ի* հոլովման ենթարկվող բառ *չկա:***

1) հայելի, ուռենի, արփի, ընկուզենի
2) դիմում, հանդիպում, կառուցում, ձուլում
3) ժամանել, երկրպագել, ուտել, շանթարգել
4) գետաձի, տիկին, քաղաքաղուռ, ամառ

54 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:**

1) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
2) Սեպտեմբերի քսանմեկին հայերս մեծ շուքով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:
3) Մռայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:
4) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:

55 **Ո՞ր նախադասության մեջ ժխտական դերբայ (ձևաբայ) կա:**

1) Մի՛ դատիր, որ չդատվես:
2) … Իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր:
3) Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ
   Թե չլինեին ընկեր, բարեկամ…
4) Քեզ երբեք սիրտս չի մոռանա,
   Իմ մաքո՛ւր, առաջի՛ն իմ անուրջ:

56 **Ո՞ր տարբերակում է *հեռու-ն* հանդես եկել որպես կապ:**

1) Ոչ ոք չէր կարծում, որ տարիներ հետո նա կլինի այդքան հեռու:
2) Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ. աչքս է հեռուն…
3) Լինե՞ր հեռու մի անկյուն,
   Լինե՞ր մանկան արդար քուն:
4) Երկար տարիներ լինելով հայրենիքից հեռու՝ նա տառապում էր մի հիվանդությամբ, որ կոչվում է կարոտախտ:

57 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Մեծ եղբայրս՝ Հակոբը, բարկացած լռեցրեց Լևոնին:

1. Հակոբը (ա. բուն բացահայտիչ, բ. ենթակա, գ. հատկացուցիչ)
2. բարկացած (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. միջոցի խնդիր)
3. լռեցրեց (ա. ստորոգելի, բ. բաղադրյալ ստորոգյալ, գ. պարզ ստորոգյալ)
4. Լևոնին (ա. հանգման խնդիր, բ. ուղիղ խնդիր, գ. վերաբերության խնդիր)

1) 1–բ , 2–գ , 3– բ, 4– ա
2) 1–գ , 2– բ, 3–ա, 4–բ
3) 1–բ , 2–ա , 3–գ , 4– ա
4) 1–ա, 2–բ , 3– գ, 4–բ

58 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Ծիծաղախիտ ծովի ծփանքն այնքան կենարար էր, որ ճակատագրից հալածված մարդիկ մի վայրկյան կարծես մոռացության տվեցին իրենց տառապանքը:
2. Նրան թվում էր, թե ինքը ժամանակից ու տարածությունից դուրս էր մղված:
3. Ամենից բարձր հոխորտում էիր դու, որ ստեղծված իրավիճակի բուն մեղավորն էիր:
4. Այժմ նա հալածվում էր նրանցից, ովքեր ժամանակին աջակցել էին իրեն:

ա. ձևի պարագա
բ. չափի պարագա
գ. բացահայտիչ
դ. ներգործող խնդիր
ե. ենթակա

1) 1–ա, 2–ե, 3–դ, 4–գ
2) 1–բ, 2–ա, 3–գ, 4–ե
3) 1–ե, 2–բ, 3–գ, 4–դ
4) 1–բ, 2–ե, 3–գ, 4–դ

59 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:**

1) *Գրողներից ովքեր մտերմություն էին անում Զորյանի հետ, գիտեին նրա նրբազգաց բնավորությունը:*
Գրողներից Զորյանի հետ մտերմություն անողները գիտեին նրա նրբազգաց բնավորությունը:
2) *Ճանաչեց ինձ, նույնիսկ հիշեց իր խորհուրդը, որ տվել էր ինձ՝ սովորել, բարձրագույն կրթություն ստանալ:*
Ճանաչեց ինձ, նույնիսկ հիշեց սովորելու, բարձրագույն կրթություն ստանալու մասին ինձ իր տված խորհուրդը:
3) *Կարդում էր հանդարտ, մի այնպիսի ջերմությամբ, որ աննկատելի նվաճում էր ընթերցողին:*
Կարդում էր հանդարտ, ընթերցողին աննկատելի նվաճող մի ջերմությամբ:
4) *Թումանյանի հոբելյանը մի սովորական հանդես չէր, որ կատարվում է նշանակված օրը և հետևյալ օրն իսկ մոռացվում:*
Թումանյանի հոբելյանը նշանակված օրը կատարվող և հետևյալ օրն իսկ մոռացվող մի սովորական հանդես չէր:

60 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Այդ երեկո մայրս մեզ համար կարդաց Բակունց Ստեփան դայու տղայի՝ Ալեքսանդրի գրածը:*
Այդ երեկո մայրս մեզ համար կարդաց այն, ինչ գրել է Բակունց Ստեփան դայու տղան՝ Ալեքսանդրը:
2) *Գուսանական ու ժողովրդական երգեր լսելու համար Սաթյանը հաճախ էր գալիս ժողովրդական ստեղծագործության տուն:*
Սաթյանը հաճախ էր գալիս ժողովրդական ստեղծագործության տուն, որպեսզի գուսանական ու ժողովրդական երգեր լսեր:
3) *Նա գրաճանաչ էր դարձել 1921-ին՝ վեց տարեկանը դեռ չլրացած:*
Նա գրաճանաչ էր դարձել 1921-ին, երբ վեց տարեկանը դեռ չէր լրացել:
4) *Թռուցիկը պատմում էր ղեկավարներից մեկի՝ Թիֆլիսում ինքնասպան լինելու մասին:*
Թռուցիկը պատմում էր ղեկավարներից մեկի մասին, որը Թիֆլիսում ինքնասպան էր եղել:

61 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բուք պիտի դրվի:**

Լոս Անջելեսի արբանյակ քաղաքում (1) Փասադենայում հայերեն նոր թերթ էր հիմնվում (2) «Մասիս» (3) հիմնադրամ պիտի ստեղծվեր հրատարակության (4) նախօրոք հաշվարկված (5) ծախսերը հոգալու համար: Դրամական միջոցների (6) հայերի շրջանում կազմակերպված հանգանակությանը մասնակցեցին շատերը (7) ի թիվս նրանց յոթ-ութ տարեկան մի տղա(8) Հարություն Գրիգորյանը: Նա թերթին նվիրեց ութ դոլար այդ գումարը գոյացած պաղպաղակի և անուշեղենի համար տատիկի տված ցենտերից (9) դարձավ հիմնադրամի(10) մանկական մաքուր ձեռքերով դրված հիմնաքարը:

1) 1, 2, 6, 8,10
2) 2, 4, 7, 8, 9
3) 1, 3, 4 ,7, 10
4) 2, 3, 5, 6, 8

62 **Ո՞ր խոսքը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսինն է:**

1. «…Բայց այս տեսակ աղջիկները գործ չեն տեսներ տունը. առտվընե մինչև իրիկուն ծունկ ծունկի վրա կը դնեն և կերգեն, կը պարեն և կամ բոլոր օրը կը պտտին. հիմակվընե ըսեմ, վերջեն ինձի պատճառ չբըռնես… անանկներ ալ կան, որ իրենց ուզած մեկը կը սիրեն և շատ անգամ անոր հետ գեղ մը կը փախչին…»:
2. «…Անոնք, որ գիրքով կզբաղին, թշվառությամբ կզբաղին: Հառաջադիմություն կը պոռանք և ետ ետ կերթանք, լույս կը պոռանք և դեպի խավար կերթանք, …ապագա կըսենք և դեպի անցյալ կը վազենք»:
3. «Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրչի դեմ, …կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ. իսկ հիմա անցան այն ժամանակները»:
4. «Միտքդ ի՞նչ է, եղբա՛յրս, ես քեզի բան մը չըրի, ինչ կուզես ինձմե, գնա քեզի բարկացնողին զրուցե այդ խոսքերը…»:

ա. Աբիսողոմ աղա
բ.բանաստեղծ
գ. վարժապետ
դ. Շուշան

1) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ

63 **Տրված հատվածներից ո՞րը որ ստեղծագործությունից է:**

1. – «Վարձա կն ահա, տեղ բացեք,
   վարձա՛կը, վարդ տեղացեք.
   Մազերուն մեջ, ոտքին տակ
   մարգարիտնե՞ր լեցուցեք»:
2. Ես ուզեցի լուռ մենանալ,
   Սիրել փըթիթք, խորշեր թավուտ,
   Սիրել կայծերն երկնի կապուտ,
   Առտըվան շաղն, իրիկվան բալ,
   Ճակատագրիս սև գիծ կարդալ,
   Խոկալ, սուզիլ, ըզմայլիլ սուտ:
3. Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.
   Եվ համբագին գիրքը ձեռքես կ՛իյնա վար.
   Երազներու պերճուհին է որ կ՛անցնի,
   Ու կը փոթի ծովակն հոգվույս՝ մեղմավար:
4. Կ՛ըլլան մարդիկ, որ լացող մը չ՛ունին,
   Անոր համար Նա դրրավ այդ լուսին.
   Եվ մահամերձն ալ կ՛ուզե երկու բան,
   Նախ՝ կյա՜նքը, վերջը՝ լացող մ՚իր վըրան:

ա. «Վայրկյան» (Մ. Մեծարենց)

բ. «Հարճը» (Դ. Վարուժան)

գ. «Տրտունջք» (Պ. Դուրյան)

դ. «Սիրել» (Պ. Դուրյան)

1) 1-գ, 2- ա, 3-դ, 4-բ
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4- գ
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

64 **Բառերից քանիսո՞ւմ հնչյունափոխություն կա.**

իջվածք, թևավոր, մանկություն, ուխտադրուժ, դեռափթիթ, պտղամիս, ընձուղտ, կարծրանալ, վայրէջք, տվյալ:

65 **Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

հակոտնյա, մեղք, հակառակ, հանցանք, հովատակ, մեղկ, նժույգ, հրովարտակ, զանցանք, ներհակ, վարգ, երիվար:

66 **Քանի՞ անկախ դերբայ կա տրված հատվածում:**

Հաջորդ գարնանը մեր արագիլը եկավ մեն–մենակ: Բույնը դիտելուց հետո գնաց կանգնեց ճահիճը, կանգնեց կնոջ զարկված տեղի վրա, կանգնեց ու նորից եկավ բույնը: Եվ ամեն օր գնում էր նա այնտեղ, մի ոտքի վրա ժամերով տխուր կանգնում՝ վիզը ծռած, գլուխը թևերի տակ դրած: Տեսնում էինք հաճախ, թե ինչպես մի արագիլ մոտենում է նրա բնին, սկսում է նրա հետ խոսել ու դժկամ հեռանում է: Երբեմն էլ այդ եկվոր արագիլները փորձում էին նստել բնի մեջ, բայց նա մերժում էր և բույն մտնելիս նրանց հեռացնում: Քանի մեր արագիլը վանում էր նրան, նա նույնքան համառությամբ նորից թևերը փռում էր արագիլի վրա:

67 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պարագա ստորադաս նախադասություն կա:**

1. Նրանք հավաքվեցին խարույկի շուրջը, հենց կրակի բոցերը մի փոքր մեղմացան:
2. Երբ հասան լեռնաշղթայի փեշերին, երեխաները ցրվեցին տարբեր կողմեր:
3. Թեպետ Մարատը գործը կատարում էր անթերի ու արագ, տնօրենը դարձյալ դժգոհում էր:
4. Բոլորը հասկացան՝ հենց Արամայիսը խանգարեց գործի կարգավորմանը

68 **Նշել այն շարքերի համարները, որոնցում սխալ են համապատասխանեցված տրված բառերի արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակները.**

1. բարկօղի – կոնյակ
2. հավկիթ – ձու
3. ալեհավաք – շանթարգել
4. աղվոր – գեղեցիկ
5. հանրակառք – կառք
6. աղեկ – լավ

69 **Նշել հատվածների ճիշտ հաջորդականությունը:**

1. Ես լավության խոսքն եմ ասում,
   Որ ժըպտում է մեր սըրտին...
2. Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
   Որ խոսվում է դարեդար...
3. Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
   Անե՞ծք նըրա չար գործքին...
4. Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,
   Լավ արարքը, լավ մարդին...
5. Որդիդ լինի, թե հերն ու մեր,
   Թե մուրազով սիրած կին...
6. Երնե՞կ նըրան, որ իր գործով
   Կապրի անվերջ, անդադար...

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բոլոր անկախ դերբայները կարող են կատարել որոշչի պաշտոն:
2. Բոլոր անկախ դերբայները կարող են կատարել ժամանակի պարագայի պաշտոն:
3. Անորոշ դերբայը կարող է հանդես գալ բաղադրյալ ստորոգյալի կազմում:
4. Անորոշ դերբայը կարող է կատարել որոշչի և հատկացուցչի պաշտոններ:
5. Անորոշ դերբայը գործիական հոլովով կարող է դառնալ ձևի, ժամանակի և տեղի պարագա:
6. Հարակատար դերբայը կարող է կատարել ձևի պարագայի, ժամանակի պարագայի, որոշչի պաշտոններ: